ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 450-22

2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ» N 549-21 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» «07» 2022թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Խառատյանի, որը գործում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրության հիման վրա, «այսուհետ՝ Նախարարություն», մի կողմից և «Երասխի գինու գործարան» ՍՊԸ-ն, ի դեմս՝ ընկերության տնօրեն Ռազմիկ Թևոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, «այսուհետ՝ Շահառու», մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով 2021 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N 549-21 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 6.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի նախաբանում «դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2022 թվականի դեկտեմբերի 30-ը», իսկ «որոշումը» բառը՝ «ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջացառումների մասին» N 2121-Ն որոշումները» բառերով:

1.2 Պայմանագրի 3.4-րդ կետից լրացնել նոր՝ 3.5-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«3.5 Այն դեպքում, երբ դիմումով ակնկալվող օժանդակության գումարի չափը գերազանցում է Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով օժանդակության տրամադրման համար հատկացված գումարի մնացորդը, ապա տվյալ դիմումի շրջանակներում օժանդակության գումարը տրամադրվում է մասնակի՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով օժանդակության տրամադրման համար հատկացված գումարի մնացորդի չափով:»:

1.3 Պայմանագրի 5.1-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով օժանդակության տրամադրման համար հատկացված գումարի սպառվելը, բայց ոչ ավել քան միջոցառման գործողության ժամկետի ավարտը:»:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՇԱՀԱՌՈՒ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Երասխի գինու գործարան ՍՊԸ
Հասցեն՝	Հասցեն
0010, քաղ. Երևան, Միհեր Մկրտչյան 5	Արարատի մարզ, գ. Երասխ,
ՀՀ ֆինանսների նախարարության	Ռ. Օղիկյան 3
գործառնական վարչություն	ՀՎՀՀ 04106152
Հ/Հ 900011036051	Հեռ. 093 40 57 67
ՀՎՀՀ 02698604	Հ/Հ 2500010466800100
ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր	Արմսվիսբանկ ՓԲԸ
քարտուղարի պարտականությունները կատարող	Երասխի գինու գործարան ՍՊԸ-ի
	տնօրեն
.....	.....
ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ	ՌԱՉՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ
Կ.Տ.	Կ. Տ.